ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓ ԶԵԿՈՒՅՑ

ԳՅՈՒՄՐԻ
2019

Զեկույցի հեղինակ՝
Երիտասարդական աշխատանքի փորձագետ, Կարեն Տերտերյան

«Երիտասարդական աշխատանքի և երիտասարդական կենտրոնների միջազգային ցանցերի ուսումնասիրություն»: Զեկույց
Գյումրի: Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ, 2019, 11 էջ:

Զեկույցում ներկայացված են եվրոպական երիտասարդական աշխատանքի և երիտասարդական կենտրոնների ցանցերի և դրանց անդամակցության պայմանների վերաբերյալ վերլուծական տեղեկություններ:

Ուսումնասիրության համար եվրոպական տարածաշրջանն ընտրվել է հաշվի առնելով հայաստանյան երիտասարդական ոլորտի զարգացման ժամանակակից պատմական հիմքերն ու կապերը, գործընկերային սերտ հարաբերությունները, զարգացման գաղափարական ու մեթոդական ընդհանրությունները:

Աշխատանքը նախատեսված է ոլորտային պետական, միջազգային, տեղական կառույցների, երիտասարդական կազմակերպությունների, երիտասարդության հարցերով հետաքրքրված մասնագետների ու փորձագետների համար:

Զեկույցը հիմնված է փաստաթղթերի և նյութերի ուսումնասիրության վրա:

Սույն զեկույցը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի ճանաչում» ծրագրի շրջանակներում:

Զեկույցի ամբողջական կամ մասնակի վերարտադրումը, հրապարակումը թույլատրելի է միայն ոչ առևտրային նպատակներով և աղբյուրի պատշաճ հղման պայմանով:

(CC) Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ, 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 4

Օգտագործված հիմնական հասկացություններ 5

Երիտասարդական աշխատանքի եվրոպական ցանցեր 6

- **«Եվրոպայում արհեստավարժ բաց երիտասարդական աշխատանքի ցանց» (POYWE)** 6

Երիտասարդական կենտրոնների եվրոպական ցանցեր 8

- **«Եվրոպական երիտասարդական տեղեկատվական և խորհրդատվական գործակալություն» (ERYICA)** 8
- **«Երիտասարդական կենտրոնների եվրոպական ցանց» (ENYC)** 10
- **«Երիտասարդական կենտրոնների եվրոպական պլատֆորմ» (EPYC)** 11

Ներածություն

Սույն Զեկույցը պատրաստվել է Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» հասարակական կազմակերպության **«Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի ճանաչում»** ծրագրի շրջանակում[1]:

Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի (ԲԵԱ) ինստիտուցիոնալ զարգացմանը՝ տեղական և միջազգային փորձի ջատագովության և հանրային քաղաքականությունների բարելավման միջոցով:

Ծրագրի հատուկ նպատակներն են՝

- ուսումնասիրել ԲԵԱ միջազգային փորձը և Հայաստանում դրա ներդրման հնարավորությունները,
- շահագրգիռ կողմերի հետ քննարկել Հայաստանում ԲԵԱ մոդելի ներդրման անհրաժեշտությունն ու հնարավորությունները,
- նպաստել Հայաստանում ԲԵԱ զարգացման շուրջ միջսեկտորալ և ՔՀԿ-Կառավարություն-ՏԻՄ համագործակցության ձևավորմանը,
- բացահայտել միջազգային ցանցերին անդամակցելու հնարավորություններն ու նպաստել ԲԵԱ տեղական ցանցի ձևավորմանը:

Այս վերջին նպատակի իրագործման համար կատարվել է եվրոպական երիտասարդական աշխատանքի միջազգային և որոշ ազգային ցանցերի քարտեզագրում, որի արդյունքների ամփոփման հիման վրա ստեղծվել է սույն զեկույցը, որում ներկայացված են երիտասարդական աշխատանքի և երիտասարդական կենտրոնների ցանցերի և դրանց անդամակցության պայմանների վերաբերյալ վերլուծական տեղեկություններ:

Ուսումնասիրության համար եվրոպական տարածաշրջանն ընտրվել է հաշվի առնելով հայաստանյան երիտասարդական ոլորտի զարգացման ժամանակակից պատմական հիմքերն ու կապերը, գործընկերային սերտ հարաբերությունները, զարգացման գաղափարական ու մեթոդական ընդհանրությունները:

Ուսումնասիրությունն իրականացվել է 2019թ. ապրիլ-մայիս ամիսների ընթացքում:

«Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի ճանաչում» ծրագիրն իրականացվում է Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ իրականացվող կոնսորցիումի միջոցով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակում[2]:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

[1] https://yic.am/oyw_arm/, [15.05.2019թ.]
[2] https://ccd.armla.am/, [15.05.2019թ.]

Օգտագործված հիմնական հասկացություններ

Երիտասարդական աշխատանք

Երիտասարդների, երիտասարդական խմբերի հետ տարվող աշխատանք կամ աշխատանք, որն ուղղված է երիտասարդության հիմնախնդիրների լուծմանը: Երիտասարդական աշխատանքը երիտասարդների անձնային զարգացման, սոցիալական ներառման և ակտիվ քաղաքացիության ձևավորման գործիք է: Այն ներառում է երիտասարդների հետ, երիտասարդների համար և երիտասարդների կողմից իրականացվող սոցիալական, մշակութային, կրթական, քաղաքացիական և քաղաքական բնույթի միջոցառումներ: Սրանք հիմնականում կրթական համակարգից դուրս իրականացվող միջոցառումներ են, որոնք կրում են հաճախ ոչ ֆորմալ բնույթ:[3]

Երիտասարդական աշխատող

Անձ, որն իրականացնում է երիտասարդական աշխատանք՝ նպաստելու երիտասարդների անհատական, սոցիալական և կրթական աճին, զարգացնելու նրանց ներուժը և օգնելու երիտասարդներին լիարժեք հաստատվելու հասարակության մեջ: Աշխատում է երիտասարդների և երիտասարդական խմբերի հետ, մշակում, իրականացնում և գնահատում է երիտասարդական ծրագրեր և նախագծեր, համագործակցում է տարբեր ոլորտների շահագրգիռ անձանց, խմբերի և կազմակերպությունների հետ:[4]

Բաց երիտասարդական աշխատանք

Պրոֆեսիոնալ բաց երիտասարդական աշխատանքը մասնագիտություն է, որով զբաղվում են մասնագիտական կրթություն ստացած և/կամ վերապատրաստված երիտասարդական աշխատողները, ովքեր հետևում են մասնագիտական վարքագծի կանոններին, որակի չափանիշներին և վարձատրվում են իրենց կատարած աշխատանքի համար: Սա ոչ-ֆորմալ և ինֆորմալ ուսուցման իրականացման միջոցներից է: Այն տրամադրվում է համընդհանուր հիմունքներով և բաց է բոլոր այն երիտասարդների համար, ովքեր կամավորության սկզբունքով ցանկություն են հայտնում մասնակցելու: Այն հիմնված է երիտասարդների ինքնուրույնությանը և հզորացմանը, ինչպես նաև քննադատական մտածողության մակարդակի բարձրացմանը միտված մանկավարժական հասկացությունների վրա:[5]

Երիտասարդական կենտրոններ

Պետական, համայնքային, հասարակակական կազմակերպությունների կողմից (կամ դրանց համատեղ ջանքերով) հիմնադրված և գործարկվող՝ հիմնականում երիտասարդական աշխատանքի մեթոդաբանությամբ և սկզբունքներով աշխատող, անվճար կամ անդամավճարով, բաց կամ շահառուների կոնկրետ թիրախով սահմանափակված, կազմակերպված տարածքներ: Երիտասարդական կենտրոնների հիմնական առաքելությունը երիտասարդների սոցիալական, տնտեսական, մշակութային, կրթական կարիքների և պահանջմունքների բավարարումն ու նրանց զարգացումն է: Կենտրոնները երիտասարդներին սովորաբար առաջարկում են ծառայություններ, որոնք միտված են երիտասարդների տեղեկացվածության, ժամանցի և զբաղվածության հարցերի լուծմանը, նպաստում են երիտասարդների ինքնագնահատականի բարձրացմանը, ինքնակայացմանը, հմտությունների և կարողունակությունների զարգացմանը և այլն:

[3] Երիտասարդական աշխատողների վերապատրաստման ծրագիր, էջ 1, http://erit.am/media/2017/11/10382.pdf
[4] ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2015-2025թթ. հայեցակարգ, էջ 3, http://erit.am/media/2016/06/1980.pdf
[5] Professional Open Youth Work Declaration of Principles, 2016թ., http://poywe.net/site/wp-content/uploads/2016/09/Declaration-of-Principles_Professional-Open-Youth-Work.pdf, [15.05.2019թ.]

Երիտասարդական աշխատանքի եվրոպական ցանցեր

«Եվրոպայում արհեստավարժ բաց երիտասարդական աշխատանքի ցանց» (POYWE)

Ցանցը հիմնադրվել է 2010թ-ին bOJA (Ավստրիա) և JONG Rotterdam (Նիդերլանդներ) կազմակերպությունների նախաձեռնությամբ, երբ վերջիններս շրջանառեցին մտադրությունների նամակ, և որը ստորագրվեց յոթ երկրների (Շվեյցարիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Նորվեգիա, Անգլիա, Նիդերլանդներ և Ավստրիա) կազմակերպությունների կողմից[6]:

Ներգրավված կազմակերպությունները հիմնել են մի ցանց, որն ընդգծում է «արհեստավարժ (պրոֆեսիոնալ) բաց երիտասարդական աշխատանքի» ոլորտի մասնակիցների կարիքները և հնարավորությունները:

«Եվրոպայում արհեստավարժ բաց երիտասարդական աշխատանքի» (POYWE - Professional Open Youth Work in Europe) ցանցը հետապնդում է հետևյալ **նպատակները**՝

- Արհեստավարժ բաց երիտասարդական աշխատանքի դիրքերի ամրապնդում,
- Գործունեության այս դաշտի ազդեցությունների և անհրաժեշտության տեսանելիության ապահովում,
- Որակի զարգացման նկատմամբ ընդհանուր մոտեցում:

Հիմնական ուշադրությունը կենտրոնացած է այն փաստի վրա, որ արհեստավարժ բաց երիտասարդական աշխատանքը պետք է կարևոր դեր խաղա եվրոպական երիտասարդական քաղաքականության բոլոր հարցերում, քանի որ արհեստավարժ բաց երիտասարդական աշխատանքը բարեկամական, նորարարական և երկարաժամկետ լուծումներ է ապահովում ԵՄ տարածքի երիտասարդների մեծամասնության համար:

Սկզբունքները.

POYWE-ը[7] գործընկերների հետ միասին հրապարակել է «Սկզբունքների հռչակագիր_Արհեստավարժ բաց երիտասարդական աշխատանք» փաստաթուղթը[8]: Փաստաթուղթը վերևից ներքև թելադրվող կանոնների շարք չէ, այլ նախատեսված է որպես գործիք, ավելի հստակեցնելու, թե ինչ է երիտասարդական աշխատանքը և թե ինչ արժեքներ են ընկած նրա հիմքում:

Անդամակցության ընթացակարգը.

POYWE-ը անդամության վրա հիմնված և ներքևից վերև կառավարվող կազմակերպություն է: Սահմանված է անդամավճար, որով ծածկվում են կազմակերպության հիմնական ծախսերը՝ ապահովելով անկախություն և անհատական մոտեցում:

POYWE-ը բաց կազմակերպություն է, որը կիսում է գիտելիքները ոչ անդամների հետ (օրինակ, իր կայքի միջոցով): Ցանցը մասնակցում է երիտասարդական աշխատանքի շրջանակում անդրազգային նախագծերի՝ թե իր անդամների, թե ոչ անդամների հետ, ինչպես նաև իր անդամների և ոչ անդամների հետ աշխատում է այն նախագծերում, որոնք համակարգվում են POYWE-ի կողմից:

[6] Professional Open Youth Work in Europe (POYWE), http://poywe.net/site/?page_id=42, [15.05.2019թ.]
[7] Professional Open Youth Work in Europe (POYWE), principles, http://poywe.net/site/?page_id=908, [15.05.2019թ.]
[8] Professional Open Youth Work Declaration of Principles, 2016թ., http://poywe.net/site/wp-content/uploads/2016/09/Declaration-of-Principles_Professional-Open-Youth-Work.pdf, [15.05.2019թ.]

Անդամներին տրվող առավելությունները.

- Ընդհանուր ժողովում ձայնի իրավունք և խորհրդի անդամ ընտրվելու հնարավորություն,
- երիտասարդական աշխատանքի համար եվրոպական լոբբիում որոշումների կայացման հնարավորություն,
- առաջնահերթության իրավունք և ավելի ցածր վճար ցանցի գործունեությանը մասնակցելիս,
- նախագծերի ծրագրային հայտերի շրջանակներում նախընտրելի գործընկերություն
- Եվրոպական ասպարեզում սեփական երկիրը կամ տարածաշրջանը ներկայացնելու հնարավորություն:

2019թ. մայիսի կեսի դրությամբ ցանցը չունի Եվրոպական միությունից դուրս գտնվող երկրներից ո՛չ լիիրավ[9], ո՛չ էլ ասոցացված (affiliated)[10] անդամներ, ցանցին միացած բոլոր կազմակերպությունները ԵՄ երկրներից են:

Անդամավճարը.

Տարեկան վճարը լիիրավ անդամների համար կախված է անդամ կազմակերպության շրջանառությունից՝ նվազագույնը 1.000 եվրո, առավելագույնը՝ 4.000 եվրո: Ասոցացված անդամները վճարում են անդամավճարների 50%-ը: Անդամը (այդ թվում՝ պոտենցիալ) պարտավոր չէ ցույց տալու իր հաշվապահությունը: Համակարգը հիմնված է վստահության վրա: Նրանք, ովքեր ինչ-ինչ պատճառներով չեն ցանկանում ցույց տալ իրենց շրջանառությունը, ինքնաբերաբար վճարում են առավելագույն չափով:

Միայն լիիրավ անդամներն իրավունք ունեն քվեարկել և լինել ղեկավար կազմում[11]:

Կազմակերպության շրջանառության չափը	Լիիրավ անդամի վճար	Ասոցացված անդամի վճար
200.000 եվրոյից փոքր է	1.000 եվրո	500 եվրո
200.000 - 300.000 եվրո է	2.000 եվրո	1.000 եվրո
300.000 - 400.000 եվրո է	3.000 եվրո	1.500 եվրո
400.000 եվրոյից մեծ է	4.000 եվրո	2.000 եվրո

[9] Professional Open Youth Work in Europe (POYWE), full members, http://poywe.net/site/?page_id=73, [15.05.2019թ.]
[10] Professional Open Youth Work in Europe (POYWE), affiliated members, http://poywe.net/site/?page_id=246, [15.05.2019թ.]
[11] Professional Open Youth Work in Europe (POYWE), membership fee, http://poywe.net/site/?page_id=38, [15.05.2019թ.]

Երիտասարդական կենտրոնների եվրոպական ցանցեր

«Եվրոպական երիտասարդական տեղեկատվական և խորհրդատվական գործակալություն» (ERYICA)

Եվրոպական երիտասարդական տեղեկատվական և խորհրդատվական գործակալությունը (ERYICA) միջազգային, ոչ կառավարական, շահույթ չհետապնդող միություն է, որը հիմնադրվել է 1986 թվականի ապրիլի 17-ին:[12]

Այն անկախ եվրոպական կազմակերպություն է, որը կազմված է երիտասարդական տեղեկատվություն համակարգող ազգային և տարածաշրջանային մարմիններից և ցանցերից (ոչ կառավարական կամ կառավարական): Այն աշխատում է երիտասարդական տեղեկատվական աշխատանքների և ծառայությունների ոլորտում եվրոպական և միջազգային համագործակցությունը ակտիվացնելու ուղղությամբ: Այն մշակում, աջակցում և առաջ է մղում միասնական երիտասարդական տեղեկատվական քաղաքականություն և պրակտիկա բոլոր մակարդակներում՝ նպատակ ունենալով բավարարել երիտասարդների տեղեկատվական կարիքներն ու կիրառել «Եվրոպական երիտասարդական տեղեկատվական խարտիայի»[13] սկզբունքները:

Ինչպես նշված է Գործակալության կանոնադրությունում, ERYICA-ն ունի հետևյալ **նպատակները՝**

1. խթանել Եվրոպական երիտասարդական տեղեկատվական խարտիայի սկզբունքների պահպանմանը և հասնել դրանց իրականացմանը,
2. զարգացնել երիտասարդական տեղեկատվության և խորհրդատվության կառույցների և մասնագետների ցանց և աջակցել դրան,
3. ապահովել եվրոպական և միջազգային ներկայացուցչություն և համակարգում երիտասարդական տեղեկատվության և խորհրդատվության բնագավառում:

Այդ նպատակներին հասնելու համար գործակալությունը եվրոպական տարածաշրջանում երիտասարդության տեղեկատվության և խորհրդատվության ոլորտում ձգտում է.

- համախմբել ոլորտի համակարգող մարմիններին,
- մշտադիտարկել ոլորտի ընթացիկ վիճակը և դրա էվոլյուցիան,
- նպաստել եվրոպական համագործակցությանը այս ոլորտում աշխատող մարմինների միջև՝ հատկապես մասնագիտական փոխանակումների միջոցով,
- խթանել այս ոլորտում հետազոտությունների և նորարարությունների զարգացմանը և երիտասարդների կարիքները բավարարող ծառայությունների զարգացմանը,
- համագործակցել այս ոլորտի միջազգային հաստատությունների, կազմակերպությունների և ցանցերի հետ.
- ձեռնարկել Գործակալության նպատակներին հասնելու համար այլ նախաձեռնություններ, որոնք օգտակար կհամարվեն նրա անդամների կամ ղեկավար մարմինների կողմից:

2019թ. մայիսի կեսի դրությամբ Գործակալությունը համախմբում է 27 երկրից 28 լիիրավ ու 7 ասոցացված անդամի և 5 գործընկերոջ:[14]

[12] European Youth Information and Counselling Agency (ERYICA) https://www.eryica.org/eryica, [15.05.2019թ.]
[13] European Youth Information Charter https://www.eryica.org/european-youth-information-charter, [15.05.2019թ.]
[14] European Youth Information and Counselling Agency (ERYICA), members, https://www.eryica.org/our-network, [15.05.2019թ.]

Անդամակցության ընթացակարգը.

ERYICA-ն գործում է իր անդամ կազմակերպությունների միջոցով: Գործակալության միակ բաժինը, որը չի հանդիսանում անդամ կազմակերպություններից որևէ մեկի մաս՝ դա Քարտուղարությունն է: ERYICA-ն ֆիզիկական անձանց հայտեր չի ընդունում, կարող են անդամակցել միայն կազմակերպություններ, որոնք՝ «Եվրոպական երիտասարդական տեղեկատվական խարտիային» համապատասխան, տեղեկատվություն են տրամադրում երիտասարդներին և/կամ համակարգում ու աջակցում են նման տեղեկատվություն տրամադրող տեղական և տարածաշրջանային մարմիններին:

Կա անդամակցության երկու կարգավիճակ՝ անդամ և ասոցացված կազմակերպություն: Եվս մեկ հնարավորություն էլ կա՝ համագործակցող կազմակերպության կարգավիճակ, որը կարող է տրվել երիտասարդական տեղեկատվության և խորհրդատվական աշխատանքի մեջ ներգրավված առանձին կազմակերպությունների:

Կարգավիճակ ստանալու մասին հետաքրքրվածության հայտադիմումը մի քանի հարցից բաղկացած առցանց հաղորդագրության ձևաչափով է պատրաստված, որը կարելի է լրացնել Գործակալության պաշտոնակայքում:

Անդամներին տրվող առավելությունները.

- անդամները և նրանց ամբողջական ցանցը հնարավորություն ունեն անվճար օգտվել Գործակալության բոլոր ծառայություններից,
- կարող են մասնակցության համար Գործակալության կողմից կազմակերպվող բոլոր միջոցառումներին մարդկանց առաջադրել,
- կարող են մասնակցել Գլխավոր ասամբլեայի ամենամյա նիստերին՝ քվեարկելու իրավունքով,
- որպես թեկնածու առաջադրվել Կառավարման խորհրդի ընտրություններում և այլ պաշտոններում:

Անդամավճարը.

Անդամ հանդիսացող յուրաքանչյուր կազմակերպություն Գործակալությանը վճարում է տարեկան անդամավճար, որի չափի մասին տեղեկատվություն հրապարակված չէ: Թեկնածու կազմակերպության գրավոր հայտը կարգավիճակներից որևէ մեկը ստանալու վերաբերյալ քննում է Կառավարման խորհուրդը:

«Երիտասարդական կենտրոնների եվրոպական ցանց» (ENYC)

Միջազգային և միջմշակութային ուսուցման երիտասարդական կենտրոնների եվրոպական ցանցը (European Network of Youth Centres for International and Intercultural Learning) կենտրոնների կամավոր միավորում է, որը հիմնադրվել է 2003 թվականին և շարունակում է զարգացնել իր աշխատանքը:[15]

Ցանցը ղեկավարվում է Տարեկան ժողովի և Գործադիր խորհրդի կողմից:

2019թ. մայիսի կեսի դրությամբ ցանցը միավորում էր 19 լիիրավ անդամի: Ասոցացված անդամների մասին տեղեկատվությունը բացակայում է: Հայաստանից ցանցին անդամակցում է «Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ-ն:[16]

Անդամակցության ընթացակարգը.

Ցանցը միավորում է այն երիտասարդական կենտրոններին, որոնք գիտակցաբար խթանում են միջմշակութային և միջազգային փոխըմբռնումը և առաջնորդվում են հետևյալ առանցքային նպատակներով ու մեթոդներով՝

- կենտրոնն օգտագործում է մասնակցային մեթոդներ և ոչ ֆորմալ ուսում,
- գիտակցաբար մասնակցում է միջազգային և միջմշակութային փոխանակման և ուսուցման,
- խթանում է իրազեկվածությունը և խրախուսում է Եվրոպայի տարբեր մշակութային ինքնությունների զարգացումը,
- կիսում է Եվրոպայի խորհրդի մարդու համընդհանուր իրավունքների և բազմակարծիք ժողովրդավարության արժեքները,
- ձգտում է լուծումներ գտնել այնպիսի խնդիրների համար, ինչպիսիք են քսենոֆոբիան և ռասիզմը:

Անդամակցության համար անհրաժեշտ է լրացնել հայտադիմում, որի ձևանմուշը կարելի է ներբեռնել ցանցի պաշտոնակայքից:

Անդամներին տրվող առավելությունները.

Նմանատիպ երիտասարդական կենտրոններին ENYC-ն **առաջարկում է՝**

- մշակել ստանդարտներ տեղական, տարածաշրջանային և ազգային կենտրոնների համար, որպես բազմակարծություն և բազմազանություն պահպանելու ժամանակ նրանց որակը ցուցադրելու միջոց,
- ապահովել աջակցություն առանձին կենտրոններին, իրենց աշխատանքի զարգացմանը զուգընթաց,
- նպաստել ուսումնական այցերին և այլ փոխանակումներին, որպեսզի կենտրոնները կարողանան սովորել միմյանցից,
- նպաստել ոչ ֆորմալ միջավայրում միջմշակութային և միջազգային ուսուցման գործընթացների ուսումնասիրմանը:

Անդամավճարը.

Անդամության տարեկան վճարը կազմում է 600 եվրո:

[15] European Network of Youth Centres (ENYC) http://eycn.org/, [15.05.2019թ.]
[16] European Network of Youth Centres (ENYC), members http://eycn.org/members/, [15.05.2019թ.]

«Երիտասարդական կենտրոնների եվրոպական պլատֆորմ» (EPYC)

Երիտասարդական կենտրոնների եվրոպական պլատֆորմը (European Platform of Youth Centres)[17], որի առաջին ժողովը տեղի է ունեցել 2010թ., անցկացվում է ամեն տարի՝ նպատակ ունենալով խթանել մասնագիտական գիտելիքների փոխանակմանը «Որակի պիտակով» (Quality Label)[18] ճանաչված և դա ձեռք բերելու ձգտում ունեցող երիտասարդական կենտրոնների միջև:

2019թ. մայիսի կեսի դրությամբ Որակի պիտակ (նշան) ստացած կենտրոնները 13-ն են՝ Եվրոպայի խորհրդի անդամ 11 երկրից:

Հատկանշական է, որ ինքը՝ EPYC-ը Որակի պիտակ չի տրամադրում: Պիտակը՝ հաստակ ընթացակարգով և չափորոշիչներով, տրամադրում է Եվրոպայի խորհուրդը[19], ինչը հնարավորություն է ստեղծում հայաստանյան որևէ երիտասարդական կենտրոնի ևս՝ համապատասխան պահանջները բավարարելու դեպքում, դիմել և ստանալ նման պիտակ:

Դեռևս հայտի քննարկման փուլում թեկնածու կենտրոնը արդեն իսկ կարող է օգտվել EPYC-ի ընձեռած մի շարք հնարավորություններից:

Իր գոյության ընթացքում պլատֆորմը դարձել է հեղինակավոր իրադարձություն, որի նիստերն ուղղված են երիտասարդական կենտրոնների կառավարմանն առնչվող ընդհանուր հետաքրքրության ռազմավարական հարցերի քննարկմանը:

Ի հավելումն պլատֆորմի պարբերական հանդիպում-ժողովների, «Որակի պիտակ» ծրագրի շրջանակում կազմակերպվում են նաև դասընթացներ: Այդ միջոցառումները ապահովում են երիտասարդական կենտրոնների ուսուցանողների շրջանում լավագույն փորձի փոխանակում և պետք է հյուրընկալվեն պիտակ ստացած որևէ երիտասարդական կենտրոնի կողմից՝ որպեսզի օգտագործվի այդ կենտրոնի փորձն ու գիտելիքները, և որն առավելագույնս է համապատասխանում վերապատրաստման դասընթացի թեմաներին:

Պլատֆորմի վերջին հանդիպման ժամանակ ապագա հանդիպումների համար սահմանվել են հետևյալ հստակ նպատակները՝

- տեղեկացնել եվրոպական մակարդակով երիտասարդական քաղաքականության վերջին զարգացումների մասին և քննարկել, թե դրանք ինչպես կարող են օգտագործվել կենտրոնների կողմից՝ իրենց աշխատանքի ճանաչման և ազդեցության առումով,
- նպաստել կենտրոնների միջև փորձի և պրակտիկաների փոխանակմանը այն հարցի շուրջ, թե ինչպես են նրանք հաղթահարում խնդիրները, որոնց հանդիպում են ազգային մակարդակում,
- մշակել համատեղ մոտեցումներ երիտասարդական կենտրոնների առաջխաղացման համար,
- ստեղծել պիտակավորված կենտրոնների միջև կապեր և համագործակցություն հաստատելու հնարավորություններ:

[17] European Platform of Youth Centres, https://www.coe.int/en/web/youth/european-platform-for-youth-centres1, [15.05.2019թ.]
[18] Quality Label for Youth Centres, https://www.coe.int/en/web/youth/quality-label-for-youth-centres, [15.05.2019թ.]
[19] How to apply for the Quality Label, https://www.coe.int/en/web/youth/ql-how-to-apply1, [15.05.2019թ.]